Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն N 14.1/[39734]-10

ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏ ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՄՈՏ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 11-ԻՆ ԺԱՄԸ 10:00-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ `«ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

քաղ. Երևան

Մասնակցում էին `

Ն. Երիցյան	-ՀՀ էկոնոմիկայի նախարար
Ա. Աշոտյան	-ՀՀ կրթության և գիտության նախարար
Վ. Սարգսյան	-ՀՀ Նախագահի աշխատակազմի ղեկավարի տեղակալ
Դ. Սարգսյան	-ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար
Վ. Գաբրիելյան	-ՀՀ Կենտրոնական բանկի նախագահի տեղակալ
Ա. Կարապետյան	- ՀՀ կառավարության աշխատակազմի սոցիալական վարչության պետ
Ա. Սիմոնյան	-ԵՊՀ- ի ռեկտոր
Ս. Սիմոնյան	- ՀՀ կառավարության աշխատակազմի սոցիալական վարչության գլխավոր մասնագետ
Ռ. Թոփչյան	-«Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի գործադիր տնօրեն
Գ. Մարգարով	-Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի տեղեկատվական անվտանգության և ծրագրային ապահովման ամբիոնի վարիչ
Ա. Ղուկասյան	-Հայաստանի բանկերի միության նախագահ
Բ. Փափազյան	-Հայաստանի ազգային մրցունակության հիմնադրամի գործադիր տնօրեն
Հ. Գրիգորյան	-ասպիրանտ
Ս. Կարախանյան	-«Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի բաժնի վարիչ

ՀՀ մասնագիտական կրթության որակի ապահովման գործընթացի անցումային ժամանակաշրջանի (2010–2015 թթ.) ռազմավարական ծրագրի մասին

(Ռ. Թոփչյան, Ա. Աշոտյան, Վ. Սարգսյան, Վ. Գաբրիելյան, Ա. Սիմոնյան, Տ. Սարգսյան)

8. Քննարկումներից հետո որոշվեց հանձնարարել ՀՀ կրթության և գիտության նախարար Ա. Աշոտյանին՝ ստեղծել աշխատանքային խումբ, մշակել և ներկայացնել հավատարմագրման համառոտ հայեցակարգ, որը կներառի՝

1) լիցենզիայի գործընթացի խստացում՝ օրենքով նախատեսելով բուհերի պարտադիր վերալիցենզավորում 2011թ.,

2) հավատարմագրման կամավորության սկզբունք,

3) հավատարմագրման նպատակները՝

ա. պետությունը պետական պատվերը ներդնում է հավատարմագրված բուհերում,

բ. լուծում է դիպլոմների ճանաչելիության խնդիր պետության ներսում և արտերկրում,

գ. շուկայում ազդակ է հաղորդում բուհերի որակի մասին,

4) հավատարմագրման նոր կարգի անցումային փուլի նկարագիրը,

5) ինչպես ենք ճանաչելու օտարերկրյա հավատարմագրող ծառայությունների վկայականները,

6) 2011 թ. հավատարմագրման մարմինը պատրաստ է սկսելու հավատարմագրումը.

7) 2013 թ. դիմում ենք համապատասխան եվրոպական կառույցներին ՈԱԱԿ-ի ճանաչման գործընթացն սկսելու նպատակով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎԱՐՉԱՊԵՏ ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ